

AGBU

Երկամսյա Տոնակազի

2018-2019





2019ԻՆ Ն.Բ.Ը.Ս.-Ն.Ե.Ը.Ղ Երիտասարդական
փառատօնի մը ընթացքին բացումը
կատարեց իր սեփական մարզադաշտին,
Պէրոյֆ, Լիբանան

Բովանդակություն

04 Նախագահին Խօսքը

06 Ն.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողով

07 Նիւթական Տեղեկագիր

10 2018–2019 Նախաձեռնություններ Եւ Ուղղություններ

10 Մեր Ազգային Ժառանգության Յայտնաբերումը

16 Հայրենաշինական Գործունեության Աշխուժացում

23 Միատրոդ Կետեր

24 Երկամեակներ

27 Պատմական Ոգեկոչումներ

28 Շրջադարձային Տարեդարձներ

30 Շրջանային Համաժողովներ

31 Համայնքներ Եւ Մշակոյթ (Ըստ Շրջանների)

32 Հայաստան

34 Հիւսիսային Ամերիկա

36 Հարավային Ամերիկա

38 Եւրոպա

40 Ափրիկէ Եւ Միջին Արեւելք

42 Աստրալիա

43 Ծրագիրներ, Արտադրություններ Եւ Հովանաւորություն

44 Կրթություն

48 Ընկերային-Տնտեսական Զարգացում

49 Մշակոյթ

56 Մեծարեալներ

59 Շրջանակային Յանձնաժողովներու Եւ Մասնաճիւղերու Վարչութեանց Ատենապետներ



Ամփոփելու համար 2018 և 2019 տարիներու Հ.Բ.Ը.Մ.ի գործունեությունը, կարելի է հաստատել, թե անհկա դրսևորեց համաշխարհային գետնի վրայ զարգացող իրադարձություններուն ընդառաջ, հայանպաստ ձեռքբերումներ իրականացնելու Միության կարողականությունը: Նոյն ատեն, անոր բարձր վարկն ու համաշխարհային պետական և հասարակական կառույցներու մօտ վայելած վստահությունը, կարելի դարձուցին Հայաստանի հասարակական և տնտեսական զարգացման ուղղուած համագործակցական նախաձեռնություններու ապահովումը, հայությունը ներգրաւելով համաշխարհայնական մշակոյթի, միջազգային առեւտուրի և հասարակական-տնտեսական զարգացման ոլորտներէն ներս:

Նախագահին Խօսքը

2018 և 2019 տարիներուն, համաշխարհային իրականութեան մէջ հայ ժողովուրդը լայն ուշադրութեան արժանացաւ, քաղաքական, մշակութային և տնտեսական տարբեր դրսևորումներով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր միջազգային համագործակցական կապերուն, փորձագետներու համաշխարհային ցանցին և լրատուական ճարտարագիտութեան ընձեռած կարելիութիւններուն միջոցաւ, սատար հանդիսացաւ այդ տեսանելիութեան ապահովումին:

Միութիւնը ազգաշէն իր գործունեութիւնը ընդարձակեց Հայաստանի և Արցախի մէջ, հանրային զարգացման նոր ծրագիրներով:

2018-ին Հայաստանը հիւրընկալեց շարք մը յատկանշական համաժողովներ: Հոկտեմբերին, Յրանքոֆոնի Գագաթնաժողովը գումարուեցաւ Հայաստանի մէջ: 88 երկիրներու պետական գլխաւոր դէմքերու մասնակցութեամբ իրականացուող երկամեայ այս ձեռնարկին համար Հայաստանը ընտրուած էր որպէս հիւրընկալող երկիր, համաշխարհային բեմի վրայ իր մասնատր մարզի դրսևորած ձեռքբերումներուն և միջազգային դիրքին պատճառով:

Յաջորդ տարի, Հայաստանի մէջ կայացած Տեղեկատուական Ճարտարագիտութիւններու Համաշխարհային Գոնկրէսի (WCIT) համաժողովին առիթով, Հայաստան այցելեցին տեղեկատուական ճարտարագիտութիւններու հազարաւոր մասնագետներ, ծանօթանալու համար Հայաստանի մէջ այդ մարզի նորարար և մրցունակ նախաձեռնութիւններուն:

Հ.Բ.Ը.Մ.ը քուլիսային աշխատանքով իր կարելիութիւնները ի գործ դրաւ ապահովելու համար այս համաժողովներու յաջողութիւնը, ֆինանսական և ճարտարագիտական լրացուցիչ միջոցներ տրամադրելով հոն ուր կարիքը կը զգացուէր, նաեւ կրթական և մշակութային միջոցառումներով, այդ համաժողովներու արդիւնքները հոնատրելով, ի նպաստ Հայաստանի միջազգային

վարկի բարձրացումին: Տարիներու ընթացքին Միութեան ներդրումները կրթական միջոցառումներու մարզին մէջ, փաստօրէն կ'արդիւնաւորուէին, յատկապէս Համացանցային Համալսարանի (AVC) հարթակներուն ընձեռած ճարտարագիտական կարելիութիւններով՝ Ելեկտրոնային Գիրքերու (eBooks) և Համացանցային Հարցազոյցներու (Web Talks) միջոցառումներով, որոնք շարունակեցին լայն շրջանակներուն հասանելի դարձնել մշակութային և պատմական գիտելիքներ և ծանօթութիւններ: Համաշխարհային լայն տարածում ունեցող Հ.Բ.Ը.Մ.ի պաշտօնաթերթը (AGBU Magazine) իր բազմաբովանդակ և դրական լրատուութեամբ, լրացուցիչ դեր կատարեց այս ուղղութեամբ, հասնելով հայաշխարհէն անդին, Հայաստանի նկատմամբ հետաքրքրութիւն և համակրանք ստեղծելով:

Նոյնը կարելի է ըսել շարք մը աննախադէպ նախաձեռնութիւններու մասին, որոնք իրականացան Նիւ Եորքի Մէթրոփոլիթըն Արուեստի Թանգարանին մէջ 2018-2019 Armenia! խորագիրը կրող ցուցահանդէսով և Ուաշինկթըն Տի Սիի Տէթիվը Ան Տիը Մուլ-ի մէջ ժողովրդային արուեստներու ցուցադրութեամբ, որոնք հանրութեան լայն զանգուածներուն հասանելի դարձուցին և ծանօթացուցին հայ ժողովուրդի մշակութային իրայատուկ և հարուստ ներդրումը մարդկային յառաջդիմութեան և մշակոյթի զարգացման ուղղութիւններով:

Բոլոր առիթներով, Հ.Բ.Ը.Մ.ը իր կարելիութիւնները և ճիգերը ի գործ դրաւ, որպէսզի ներկայացուած ծրագիրները իրականանան կարելի առաւելագոյն փայլով, որակով և բժախնդրութեամբ, մնայուն և դրական տպաւորութիւններով ուշադրութիւն, հետաքրքրութիւն և համակրանք ստեղծելու համար հանրութեան մօտ, մեր ժողովուրդի մշակութային ասանդին, պատմական դերին և բնաշխարհի ընձեռած զբօսաշրջային կարելիութիւններուն մասին:

Մինչ աշխարհի տարածքին հայութիւնը կ'ամրապնդէր իր

առկայությունը պատմական իր դերով եւ իմացական ներուժով, Հայաստանը կրկին անգամ յայտնուեցաւ համաշխարհային լրատուութեան սեւեռակետին վրայ, իր Թաւշեայ Յեղափոխութեամբ: Երբ Հայաստանի Նորակազմ կառավարութեան անդամները արտասահմանեան միջազգային շրջանակներու մօտ նախաձեռնեցին ծանօթացման այցելութիւններու, չ.Բ.Ը.Մ.ը իր ծանօթութիւններու եւ յարաբերութիւններու լայն ցանցին միջոցաւ, տարբեր մարզերու մասնագետներու, գործարարներու եւ ներդրումային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ կազմակերպուած հանդիպումներով, մեծապէս օգտակար հանդիսացաւ: Այդ առնչութեամբ յատկանշական էր 2019-ին ճարտարագիտական մարզի մասնագետներու եւ պետական բարձրաստիճան անձնատրութիւններու Սիլիքոն Վելի այցը, որու ընթացքին Միութեան տեղւոյն մասնաճիւղը եւ անդամները, իրենց այդ մարզի շրջանակներուն հետ ունեցած կապերով, կարեւոր գործակցական նախաձեռնութիւններ իրականացուցին Հայաստանի համար, կրկին անգամ հաստատելով չ.Բ.Ը.Մ.ի համաշխարհային լայն հատողութիւնը «Փոքր Հանրապետութիւն, Համաշխարհային ազգ» հասկացողութեամբ: Երկամեայ այս Տեղեկագիրին մէջ, կը ներկայացուին վերոնշեալ գործունէութիւններուն վերաբերեալ մանրամասնութիւններ, ընդօժեւել Միութեան շրջանակներուն, մասնաճիւղերուն, Երիտասարդ Արիւստակարծներուն, համակիրներուն եւ գործընկերներուն համադրեալ, հաւատարմ ու նուիրեալ ճիգերը, որոնք, իրաքանչիւրը, գործելով իրենց համապատասխան աշխարհագրական տարբեր վայրերուն մէջ, հայկական արժէքները, մշակութային գանձերը եւ հարուստ ասանդութիւնները հասանելի դարձուցին համաշխարհային լայն շրջանակներու:

Հայրենիքի մէջ Միութեան ազգաշէն գործունէութեան 2018-2019 տարիները բնորոշող մէկ այլ երեսը որ կը դրսեւորուի այս տեղեկագիրին մէջ, կը վերաբերի յատկապէս Արցախի կանանց հզօրացումին ուղղուած ծրագիրներուն:

Մինչ կանանց դերի արդար գնահատումը խնդրոյ առարկայ է ընդհանրապէս աշխարհի տարածքին, Հայաստանի պարագային, անոնք իւրայատուկ խնդիրներ կը դիմագրաւեն տիրող ընկերային որոշ կարծրատիպերու պատճառով: Կիներու ներգրաւումը երկրի տնտեսական զարգացման գործընթացին մէջ, զիրենց հինցած ասանդութիւններէ ձեռքազատելու, նիւթապէս ինքնաբաւ գործարարներ դարձնելու եւ իրենց ինքնավստահութիւն ներշնչելու արդիւնաւոր միջոցառում մըն է անկասկած: Անոնք նաեւ իրենց կարգին օրինակելի տիպարներ կը հանդիսանան այլոց: Հետեւեալ, չ.Բ.Ը.Մ.ը յառաջ մղեց Գործարար Կիներ ծրագիրը, որ իր տեսակին մէջ աննախադէպ նախաձեռնութիւն մը կը հանդիսանար:

Միութիւնը վերահաստատեց Արցախի տարածաշրջանին մէջ խաղաղութեան ամրապնդման եւ կայուն զարգացման ծրագիրներու իրականացումին ուղղուած իր ռազմավարութիւնը: չ.Բ.Ը.Մ.ի Նորաստեղծ Արցախի Զարգացման Հինարդամը, Նոր թափ ընձեռեց այդ գործընթացին:

Բնակչութեան աճին եւ զարգացումին համար անհրաժեշտ է բազմաճիւղ աճող տնտեսութիւն, որ կարեւոր գրասկան է Արցախի անկախութեան միջազգային ճանաչման: Հմտութիւններու մշակումին եւ զարգացման ուղղուած չ.Բ.Ը.Մ.ի շարունակական ուսման ծրագիրները, կ'օգնեն որ քաղաքացիները հմտութիւններ ձեռք բերեն եւ քաջալերուին երկարատեւ ու ապահով աշխատանքի հեռանկարով, կապուած մնալու համար իրենց պապենական հողերուն:

Ինչպէս մեր անցեալ երկամեայ տեղեկագիրներու պարագային, մենք դարձեալ գնահատանքով կը նշենք, որ Միութեան շրջանակները, մասնաճիւղերը, տարբեր կեդրոնները եւ պաշտօնէութիւնը, 2018-ին եւ 2019-ին շարունակեցին համակարգուած եւ հետեւողական

գործունէութիւններով եւ տարբեր բնագաւառներու վերաբերեալ դաստիարակչական ելոյթներով, չ.Բ.Ը.Մ.ի առաքելութեան շուրջ համախմբել իրենց տեղական համայնքները, իրերօգնութեան ոգի ներշնչելով անոնց եւ մարդասիրական ու ազգաշէն նախաձեռնութիւններու մասնակից դարձնելով զիրենք:

Հպարտութեամբ կը նշենք թէ չ.Բ.Ը.Մ.ի շարունակուող ծրագիրները կը ներգրաւեն եւ կը խանդավառեն ամէն տարիքի, բնագաւառներու եւ հետաքրքրութիւններու անձեր, բազմապիսի կարելիութիւններ ստեղծելով բոլոր անոնց համար, որոնք կը փափաքին մասնակից դառնալ եւ իրենց կարողութիւնները եւ ձիրքերը ի գործ դնել հայ կեանքէն ներս, կրթութեան, մշակոյթի, մարդասիրական օգնութեան կամ հասարակական-տնտեսական զարգացման մարզերու մէջ: Այս ծրագիրներով, իր բազմաճիւղ այլ գործունէութիւններու շարքին, չ.Բ.Ը.Մ.ը կը մնայ ազգի տարբեր հատուածները եւ սերունդները իրարու շարկապող եւ կամրջող համընդհանուր կազմակերպութիւնը, որ դրական շունչով եւ ազգանուր ոգիով կը խանդավառէ բոլոր մասնակիցները:

Ի վերջոյ, դրուատանքի արժանի է այն էական դերը, զորս կը կատարեն մեր հաւատարմ նուիրատուները, կամատրները եւ պաշտօնէութիւնը: Անցնող արդիւնաւոր երկու տարիներու փայլուն իրագործումները կը պարտինք անոնց, որոնք լայնասրտօրէն տրամադրեցին իրենց ժամանակը, ձիրքերը եւ հմտութիւնը, պատեհութիւն, յոյս եւ բարեւաւում ապահովելու համար աշխարհի տարածքին բոլոր անոնց, որոնք կը վայելէն Միութեան ընձեռած բարիքները:

Ամփոփելու համար 2018 եւ 2019 տարիներու չ.Բ.Ը.Մ.ի գործունէութիւնը, կարելի է հաստատել, թէ անկիպ դրսեւորեց համաշխարհային գետնի վրայ զարգացող իրագործութիւններուն ընդառաջ, հայանպաստ ձեռքբերումներ իրականացնելու Միութեան կարողականութիւնը: Նոյն ատեն, անոր բարձր վարկն ու համաշխարհային պետական եւ հասարակական կառոյցներու մօտ վայելած վստահութիւնը, կարելի դարձուցին Հայաստանի հասարակական եւ տնտեսական զարգացման ուղղուած համագործակցական նախաձեռնութիւններու ապահովումը, հայութիւնը ներգրաւելով համաշխարհայինական մշակոյթի, միջազգային առեւտուրի եւ հասարակական-տնտեսական զարգացման ոլորտներէն ներս:

Բայց եւ այնպէս, անցնող երկու տարիներու իրագործումները եւ փայլուն ձեռքբերումները, յանգեցան դժբախտ իրագործութիւններու, որոնք 2020 տարուան ընթացքին հարուածեցին թէ Հայաստանը եւ թէ Ափիւրջը: Աշխարհատարած Համավարակը, Ատրպէյճանի շղթայազերծած յարձակումը, ինչպէս նաեւ Պէյրութի Նաւահագնիստի աղիտալի պայթումը, իրենց ահաւոր հետեւանքներով, Նոր եւ աննախադէպ իրականութիւններու եւ մարտահրաւերներու առջեւ դրին հայ ազգը: Այդ բոլորին հանգամանօրէն անդրադառնալու եւ արժեւորելու առիթը պիտի ունենանք երբ կը կատարենք անցնող եւ ընթացիկ տարուան մեր երկամեայ գործունէութեան հետագայ հաշուեհարդարը:

Անկեղծօրէն՝



Պերճ Սեդրակեան
Չ.Բ.Ը.Մ.ի Նախագահ



Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական Վարչական Ժողով

ՆԱԽԱԳԱՆ

Պերճ Սեդրակյան

ՓՈՒՆ-ՆԱԽԱԳԱՆ

Ժոզեֆ Ուդուրյան

ԳԱՆՁԱՊԱՆ

Նազարեթ Ա. Ֆըսթըքճեան

ՓՈՒՆ-ԳԱՆՁԱՊԱՆ

Երուանդ Տեմիրճեան

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Սարգիս Ճեպեճեան

ՓՈՒՆ-ԱՏԵՆԱԴՊԻՐ

Արտա Յարութիւնեան

ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄ

Ն.Ս.Օ. Տ.Տ Գարեգին Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԱՆԴԱՄՆԵՐ

ՆԱՅԱՍՏԱՆ

Վազգէն Եագուպեան

ԳԱՆԱՏԱ՝

Լենա Սարգիսեան

ՖՐԱՆՍԱ՝

Արիս Ադամեան,
Նատիա Գործունեան

ԶՈՒԻՑԵՐԻՆԱ՝

Վահե Կապրաշ

ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝

Արնօ Ադամեան,
Վարդգես Գնաճեան

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՁՆԵՐ՝

Հայկ Արիեան,
Էրիկ Իսրայելեան,
Արի Լիպարիքեան,
Անի Մանուկեան,
Լուի Մունչերեան,
Լեոն Նազարեան,
Երուանդ Զօրեան

ԽՆԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՏԵՆԱՊԵՏ

Վաչէ Մանուկեան

ԱՆԴԱՄՆԵՐ

Էրիկ Իսրայելեան,
Արմէն Սարգիսեան,
Սեմ Սիմոնեան,
Սինան Սինանեան,
Պերճ Սեդրակյան (Ի պաշտօնէ)

Նիւթական Տեղեկագիր 2018-2019⁽¹⁾

Ամերիկեան Տոլարով

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԱՄԱՆՄԲՈՒՆԾ ԱՄՓՈԹ ՆԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ

Գոյք	Դեկտեմբեր 31, 2019	Դեկտեմբեր 31, 2018
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մէջ պատրաստ	\$31,148,925	\$26,334,863
Արժեթուղթեր ⁽²⁾	8,566,435	14,819,182
Գանձելի ասանդներ/հաշիւներ	1,900,756	3,550,000
Այլ Գանձելի	4,191,415	5,041,705
Գումար Ընթացիկ Գոյքի	\$45,807,531	\$49,745,750
Արժեթուղթեր-երկարժամեայ, տոմարական արժեքով ⁽²⁾	229,187,961	225,120,051
Անշարժ Կալուածներ տոմարական արժեքով ⁽³⁾	98,545,815	98,809,322
Այլ գոյք	4,498,589	4,480,000
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր՝ զուտ	3,389,846	2,896,785
Գումար Գոյքի	\$381,429,742	\$381,051,908
Պարտականք եւ Զուտ Գոյք		
Պարտականք		
Վճարելի հաշիւներ եւ այլ պարտականք	\$8,773,275	\$8,033,174
վճարելի պարտաթուղթեր -ընթացիկ եւ երկարժամ պարտականք	99,979	121,349
Գումար Պարտականքի	8,873,254	8,154,523
Զուտ Գոյք		
Ոչ պայմանաւորեալ ⁽⁴⁾	47,049,758	48,323,524
Յատուկ նպատակներ ⁽⁵⁾	61,559,784	64,694,855
Հիմնադրամներ ⁽⁶⁾	263,946,946	259,879,006
Գումար Զուտ Գոյքի	372,556,488	372,897,385
Գումար Պարտականքի եւ Զուտ Գոյքի	\$381,429,742	\$381,051,908

- (1) Միութեան 2019 եւ 2018 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւնները կը պարփակեն Միացեալ Նահանգներու Տէլաուէրի ընկերակցութեան տուեալները, առաւել շրջանակներու, մասնաճիւղերու եւ դպրոցներու կողմէ ներկայացուած նիւթական տեղեկագրերը:
- (2) 12/31/2019-ի դրութեամբ, շուկայական գիններով ներդրումները եւ հիմնադրամներու ներդրումները \$266,512,719 էին բաղդատմամբ տոմարական արժեքի որ է \$237,754,396 12/31/2018-ի դրութեամբ, շուկայական գիններով ներդրումները եւ հիմնադրամներու ներդրումները \$240,401,925 էին բաղդատմամբ տոմարական արժեքի որ է \$239,939,233
- (3) Կերդոնական վարչութեան գնահատումով, կալուածներու ներկայ շուկայական արժեքը նկատաւէիօրէն անելի բարձր է քան անոնց տոմարական արժեքը՝ որ արձանագրուած է նիւթական տեղեկագրին մէջ
- (4) Ընդհանուր նպատակներու կը նշանակէ ոչ-պայմանաւորեալ
- (5) Յատուկ նպատակներու գոյքերը ժամանակաւորապէս պայմանաւորեալ են յատուկ նպատակներու
- (6) Հիմնադրամները վերջնականապէս պայմանաւորեալ են եւ կ'ընդգրկեն կալուածային գոյքեր

ՆԱՇՈՒԱԿԱՆ ԸՆԴԳԾՈՒՄՆԵՐ

ՆԲԸՄ Նիւթական Տեղեկագիր 10-Ամեայ Բաղդատական Գումարներու					
	2019	(ա)%	2018	(բ)%	2008
Ընդհ. Գոյք	\$381,429,742	0.1%	\$381,051,908	25.8%	\$302,899,383
Ընդհ. Մուտք	55,428,745	4.9%	52,858,352	39.2%	37,965,686
Ընդհ. Ելք	55,769,642	13.1%	49,296,030	28.4%	38,403,096

(ա) Միամեայ % Յաւելում (Նուազում) (բ) 10-ամեայ % Յաւելում (Նուազում)

Նիւթական Տեղեկագիր 2018–2019⁽¹⁾

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԵԱՆՑ ՀԱՄԱՆՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒՏՈՒԹԻՒՅԻՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

	Ընդհանուր Նպատակներու	Պայմանաւորեալ	Գումար
Հանրային Աջակցութիւն և Եկամուտներ			
Հանրային Աջակցութիւն			
Նուիրատուութիւններ	\$8,786,475	\$12,661,125	\$21,447,600
Յատուկ Ձեռնարկներ և այլ մուտքեր	5,880,889	7,040	5,887,929
	14,667,364	12,668,165	27,335,529
Մուտք			
Շահաբաժին և տոկոս	9,286,947	1,584,316	10,871,263
Կալուածային	1,511,658	4,172	1,515,830
Կրթաթոշակ և այլ դպրոցական մուտքեր	15,706,123	–	15,706,123
	26,504,728	1,588,488	28,093,216
	41,172,092	14,256,653	55,428,745
Յատուկ ծրագիրներու յատկացումներու գործադրութիւն	10,391,940	(10,391,940)	–
Գումար Հանրային Աջակցութեան և Եկամուտներու	51,564,032	3,864,713	55,428,745
Ծրագիրներու և Վարչական Ծախք			
Ծրագիր			
Կրթական	26,587,400	–	26,587,400
Մշակութային	19,486,724	–	19,486,724
Կրօնական	1,259,239	–	1,259,239
Մարդասիրական	2,208,555	–	2,208,555
	49,541,918	–	49,541,918
	4,837,260	–	4,837,260
Վարչական	1,208,300	–	1,208,300
Դրամահաւաքի, Զարգացման և Հանրային Յարաբերութիւններու			
Դրամասակային տարբերութիւն/Վերադասաւորում	182,164	–	182,164
Գումար Ծրագիրներու և Վարչական Ծախսերու	55,769,642	–	55,769,642
Յանելում (Նուազում) Զուտ Գոյքի Գործառնութիւններէ	(4,205,610)	3,864,713	(340,897)
Միջ-յատկագումարային փոխանցում/ Յատկացումներ և վերականգնում	2,931,844	(2,931,844)	–
Յանելում (Նուազում) Զուտ Գոյքի	(1,273,766)	932,869	(340,897)
Զուտ Գոյք՝ տարեսկիզբին	48,323,524	324,573,861	372,897,385
Զուտ Գոյք՝ տարեվերջին	\$47,049,758	\$325,506,730	\$372,556,488

(1) Կը բաղկանայ Ն.Բ.Ը.Մ.-ի 2019 և 2018 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւններէն (Տէլաուերի ընկերակցութեան) և շրջանակներու, մասնաճիւղերու և դպրոցներու կողմէ ներկայացուած նիւթական հաշուետուութիւններէն:

Նիւթական Տեղեկագիր 2018–2019⁽¹⁾

Ամերիկեան Տոլարով

ԳՈՐԾՈՒՆԷՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՆՄԲՈՒԱԾ ԱՄՓՈՓ ՀԱՇՈՒՏՈՒԹԻՒՅԻՆ - ԱՌ 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

	Ընդհանուր Նպատակներու	Պայմանաւորեալ	Գումար
Հանրային Աջակցութիւն և Եկամուտներ			
Հանրային Աջակցութիւն			
Նուիրատուութիւններ	\$10,836,914	\$11,781,872	\$22,618,786
Յատուկ Ձեռնարկներ և այլ մուտքեր	5,238,149	–	5,238,149
	16,075,063	11,781,872	27,856,935
Մուտք			
Շահաբաժին և տոկոս	5,711,677	1,767,401	7,479,078
Կալուածային	2,032,856	6,105	2,038,961
Կրթաթոշակ և այլ դպրոցական մուտքեր	15,483,378	–	15,483,378
	23,227,911	1,773,506	25,001,417
	39,302,974	13,555,378	52,858,352
Յատուկ ծրագիրներու յատկացումներու գործադրութիւն	7,928,942	(7,928,942)	–
Գումար Հանրային Աջակցութեան և Եկամուտներու	47,231,916	5,626,436	52,858,352
Ծրագիրներու և Վարչական Ծախք			
Ծրագիր			
Կրթական	25,198,141	–	25,198,141
Մշակութային	15,356,007	–	15,356,007
Կրօնական	1,218,174	–	1,218,174
Մարդասիրական	2,138,325	–	2,138,325
	43,910,647	–	43,910,647
	5,139,904	–	5,139,904
Վարչական	810,547	–	810,547
Դրամահաւաքի, Զարգացման և Հանրային Յարաբերութիւններու			
Դրամասակային տարբերութիւն/Վերադասաւորում	(565,068)	–	(565,068)
Գումար Ծրագիրներու և Վարչական Ծախսերու	49,296,030	–	49,296,030
Յանելում (Նուազում) Զուտ Գոյքի Գործառնութիւններէ	(2,064,114)	5,626,436	3,562,322
Միջ-յատկագումարային փոխանցում/ Յատկացումներ և վերականգնում	(387,261)	1,590,994	1,203,733
Յանելում (Նուազում) Զուտ Գոյքի	(2,451,375)	7,217,430	4,766,055
Զուտ Գոյք՝ տարեսկիզբին	50,774,899	317,356,431	368,131,330
Զուտ Գոյք՝ տարեվերջին	\$48,323,524	\$324,573,861	\$372,897,385

(1) Կը բաղկանայ Ն.Բ.Ը.Մ.-ի 2019 և 2018 տարեշրջաններու համադրուած հաշուետուութիւններէն (Տէլաուերի ընկերակցութեան) և շրջանակներու, մասնաճիւղերու և դպրոցներու կողմէ ներկայացուած Նիւթական հաշուետուութիւններէն

2018-2019 Նախաձեռնություններ եւ Ուղղություններ

Մեր Ազգային Ժառանգության Յայտնաբերումը Համաշխարհային Հարթակներու Վրայ

2018-ին Ն.Բ.Ը.Մ.-ի կատարողական արունեստի բաժանմունքը կազմակերպեց համերգային շրջապտոյտ մը Ասիոյ մէջ, Հայ-Ճափոնական Arev Arts համոյթի մասնակցութեամբ:



2018-2019 տարին բազմաթիւ առիթներ ընձեռեց մեզի, հայ ժողովուրդի հարուստ ժառանգը, մշակոյթը եւ մրցունակութիւնը բացայայտելու աշխարհին: Ն.Բ.Ը.Մ.ը իր մասնակցութիւնը բերաւ համաշխարհային տարողութեամբ միջոցառումներու, իր լայն յարաբերութիւններու ցանցին եւ ճարտարագիտական միջոցներուն օգտագործումով, որոնց մէջ Համացանցային Համալսարանի (AVC) եւ այլընտրանքային կրթութեան բաժնի ստեղծած ծանօթագրութիւններով եւ տեղեկատուական:

Միեւնոյն ատեն, Ն.Բ.Ը.Մ.-ի կատարողական արուեստի բաժանմունքը շարունակեց իր միջազգային գործընթացը, լայն շրջանակներուն, որոնց շարքին ոչ-հայերու, ծանօթացնելով Հայկական իւրայատուկ երաժշտութիւնն ու երաժշտական գործիքները: Այս ճիգերը ամրապնդուեցան Ն.Բ.Ը.Մ.-ի շրջաններու մասնաճիւղերով, որոնք կազմակերպեցին հրապարակային ձեռնարկներ, ցուցադրելով Հայկական մշակոյթը արուեստի, երաժշտութեան, ասանդական ձեռարուեստի, խոհանոցային արուեստի, լեզուի եւ գրականութեան ճամբով:

Հայաստանը Met –ի Մէջ:

Անկասկած 2018-2019ի հայկական ձեռնարկներու շարքին ծափահարելի էր հայ քրիստոնէական մշակոյթի Armenia!, փառաշուք ցուցահանդէսը, կազմակերպուած հանրածանօթ Մեթրօփոլիթըն արուեստի Թանգարանին կողմէ, Նիւ Եորք, որ կ'առանձնացներ հայ քրիստոնէական արուեստի նմոշները, որոնք մինչեւ այդ խմբաւորումը էին բիզանդական մշակոյթին հետ: 2018ի Սեպտեմբերէն մինչեւ 2019ի Յունուար ամիսը, այդ առաջին անգամն էր, որ Հայաստանի միջնադարեան արուեստի գանձերը կը ցուցադրուէին թանգարանի առաջնակարգ տարածքին, խոռոչներամ այցելուներ ունեցող գլխաւոր յարկին մէջ: Ցուցահանդէսը կ'ընդգրկէր 140 կտոր արուեստի գործեր, Հայաստանի 14-րդ դարէն, մինչեւ 17-րդ դար, որոնք փոխ տրուած էին թանգարանին հանրային եւ անհատական հաւաքածոներէ: Աւելի քան մէկ միլիոն այցելու ունեցաւ ցուցահանդէսը, իսկ յարգանք վայելող լրատուամիջոցներ եւ հրատարակութիւններ, անդրադարձան Հայաստանի տեղին հին մշակոյթի պանթէոնին մէջ, որ իր ազդեցութիւնը ունեցած է համաշխարհային քաղաքակրթութեան վրայ: Ն.Բ.Ը.Մ. պատիւը ունեցաւ մասնակցելու ցուցահանդէսի հովանաւորութեան մէջ, որպէս գլխաւոր գործակից, թանգարանի ղեկավարութեան հետ: Մենք հիմնական օժանդակողը եղանք մեր կազմակերպած մշակութային եւ դաստիարակչական միջոցառումներով, մանուկներու եւ պատանիներու յատուկ ծրագիրներով, ինչպէս նաեւ դասախօսական շարքով մը, որ կարեւոր յաւելում մըն էր թանգարանի տնօրէնութեան հիմնական ծրագրին:





1



2018ի Սեպտեմբերին սկսեալ, ցուցադրութեան հինգ ամիսներու ընթացքին, ամէն ամիս Հ.Բ.Ը.Մ. WebTalks-ի միջոցով հաղորդագրութիւն տարածեց, ներկայացնելով իր յատուկ հարցազոյցները ցուցահանդէսի գլխաւոր տնօրէններուն հետ: Երեք ընդգծումներ ցուցահանդէսէն՝ «Հայկական արուեստը եւ ստեղծագործական փոխանակումը Միջնադարեան առեւտրական ճանապարհներուն վրայ», «Հայերը Միջնադարեան աշխարհին մէջ», եւ «Վաճառականութիւն, կրօնք եւ արուեստ Միջնադարեան Հայաստանի մէջ»: Բոլորը մատչելի են ՍԷԹ-ի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի կայքերէն:

Ֆրանքոֆոնը 2018ին Հայաստանի Մէջ:

Հոկտեմբեր 7-12, 2018ին պատուիրակներ եւ այցելուներ 88 երկիրներէ հաւաքուեցան Երեւան միջազգային 17-րդ Ֆրանքոֆոնի առիթով: Ֆրանսախօս աշխարհի այս գագաթնաժողովը օգնեց, որ սերտանան դիւանագիտական, մշակութային եւ պատմական կապերը ֆրանսացիներուն եւ հայերուն միջեւ, ինչպէս նաեւ բարձրացուց Հայաստանի վարկը, որպէս այդ միջոցառումը հիւրընկալող երկիր:

Հ.Բ.Ը.Մ.ը, հովանաւորողներու շարքին, իր մասնակցութիւնը բերաւ այս միջոցառման առնչուող ձեռնարկներուն, երաժշտական ելոյթներ, դասսիսուսական շարք, գեղարուեստական ցուցահանդէսներ, կրթական ծրագիրներ եւ եզրափակիչ հանդիսութիւն:

Այս բոլորին յաւելեալ, Մոնթրէալի Հ.Բ.Ը.Մ.-ը եւ Աժանս Ինիվերսիթէր տը լա Ֆրանքոֆոն-ը (AUF) յայտարարեցին իրենց Նորագոյն համաձայնութիւնը հիմը դնելու կրթաթոշակներու եւ ուսումնական առիթներու, Հայաստանի դոկտորականի ուսանողներուն, որոնք ֆրանսախօս համալսարաններ կը յաճախեն: Ֆրանսայի Հ.Բ.Ը.Մ.ը կազմակերպեց ֆրանսերէն լեզուով կարճ պատմութեան մրցում մը, գործակցաբար Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանութեան: Այս գագաթնաժողովը իր հետքը ձգեց ոչ միայն Երեւանի փողոցներուն, այլեւ ֆրանսացի պատուիրակներուն մտքերուն մէջ, որոնք ծանօթացան ազգի մը, որ վերանորոգուած էր ժողովրդավարութեամբ եւ միջազգային ներդրով:

Հ.Բ.Ը.Մ.-ի համացանցային համալսարանն ալ իր ներդրումը ունեցաւ այս միջոցառման: Forum Economique-ի ընթացքին, ներկայցնելով ել-ուսանելու ճարտարագիտութիւնը eLearning Technologies. Ինչպէս



Հայկական Համացանցային Համալսարանը կը ծառայէ աշխարհին: Յատուկ համար մը *Décrouvons Erevan* (Ֆրանսերէն լեզուով համալսարանի ել-գիրքը Երեւանը բացայայտելու մասին, որուն վրայ Ֆրանքոֆոնի խորհրդանշանները կային մասշեյի դարձած էր բոլորին, որպէս ել- ուղեկից բոլոր պատուիրակներուն, համալսարանի տաղաւարէն 47րդ Նիստը ֆրանքոֆոնի միջազգային Միութեան տպարանէն, ֆրանքոֆոնի պաշտօնական կայքէջը եւ Le Courrier d'Erevan գազաթաժողովի կայքէջը: Ն.Բ.Ը.Մ.-ի «Իմ Արմենիա» յատուկածը, որ ֆրանսերէն լեզուով տարբերակ մըն է, ներկայացուած էր ֆրանսերէնով լոյս տեսնող AGBU Magazine-ին մէջ, որ բաժնուցաւ բոլոր ներկաներուն:

Սմիթսոնեան Հաստատութեան Հայաստանը. – «Տուն մը Ստեղծել»

2018ի ամբան, Սմիթսոնեան հաստատութիւնը ներկայացուց Հայկական Կրթական Կենտրոնը իր տարեկան ժողովրդական Կեանքի փառատօնին FolkLife Festival Ուաշինկթըն DC –ի Մօլին մէջ: Ն.Բ.Ը.Մ. գործակաւորէն օժանդակեց կազմակերպիչներուն հայթայթելով ուսումնական աղբիւրներ եւ խորհրդատուական ծառայութիւններ, ձեռնարկէն առաջ եւ ընթացքին, ինչպէս

հայկական տօնակատարութեան ասանդոյթը- կենդանի ցուցադրութեամբ Հայաստանէն մասնագետներու կողմէ: Այնպէս եղաւ որ այս միջոցառումը ամենաշատ հանդիսատես ունեցող եղաւ ժողովրդային Կեանքի FolkLife Festival փառատօններուն մէջ, վերջին տարիներուն:

Ն.Բ.Ը.Մ. հպարտօրէն շարունակեց իր երկարամեայ համագործակցութիւնը այս հաստատութեան հետ, պատրաստելով ել- գիրքը Վայոց Ձորի շրջանին մասին, որ հրատարակուեցաւ 2019-ին առընչուած My Armenia, ԻՍ Հայաստան ծրագրին: Հայաստանի շրջանները ճամբորդած երիտասարդներ կրնային Նոյնպէս բացայայտել Նորավանքը, Ջերմուկը, Սեանավանքը եւ շատ մը ուրիշ վայրեր *Im Armenia app*-ի ընդմէջէն, որ արդիականացուած էր 2018-ին, ընդգրկելով Նոր Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի շրջանները:

- 1 Կալա համերգ նուիրուած Շառլ Ազնաւուրին, Ֆրանքոֆոնի ասարտին 2018-ին, որուն հովանատրակից եղած էր Ն.Բ.Ը.Մ.-ը: 2 Սմիթսոնեան ժողովրդային Կեանքի FolkLife փառատօնը (2019)-ին: 3 Տուցադրութիւն քարի վրայ փորագրութեան: 4 Վարպետութեան դասարան հայկական գեղանկարչութեան:

DAVIT HAKOBYAN/KATHRYN MITCHELL/RALPH RINZLER/FOLKLIFE ARCHIVES



1 Լոնտոնի ՆԲԸՄ-ը Խաչքար Մը Կը Նուիրէ Քենթրալըրիի Եկեղեցիին


2019-ին, հայկական մշակույթը աշխարհի հետ բաժնեկցելու պատմական քայլով մը, Լոնտոնի Ն.Բ.Ը.Մ.ի Նախաձեռնութեամբ, Խաչքարի մը զետեղումը իրականացաւ: Քենթրալըրիի եկեղեցու մէջ: Խաչքարը քանդակուած էր արուեստագետ քանդակագործ Ճօն Մորթոնի կողմէ, օգտագործելով հայկական տուֆ քարը: Այս խորհրդանշական նուէրով, հայկական մնայուն յուշակոթող մը ստեղծուեցաւ Միացեալ Թագաւորութեան մէջ:

Լեհաստանի Սենատը Կը Տօնէ Հայկական Նուաճումները

2018-ի Սեպտեմբերին տեղի ունեցած խորհրդաժողովի մը ընթացքին Լեհաստանի Սենատը գովասանքով արտայայտուեցաւ 650 տարիներու երկայնքին հայկական համայնքին ձեռքբերումներուն մասին: Լեհաստանի Արուեստի եւ Գիտութեան Ակադեմիայի հետ Հայկական Մշակութային Միութեան եւ Եւրոպայի Ն.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութեան հետ համագործակցաբար կազմակերպուած այս միջոցառումը իրար կողքի բերաւ Լեհ եւ Հայ գիտնականներ, լուսարձակի տակ առնելու համար Լեհաստանի հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութիւնը:

Հայկական Գիւղ Փարիզի Սրտին Վրայ

Ֆրանսայի Ն.Բ.Ը.Մ.-ը կազմակերպեց առաջին բացօթեայ Հայկական փառատօնը Մարտ ամսու 22-24, 2019-ին, Place du Pantheon-ի մէջ: Փարիզի Շրջանակայինը 50.000 Եւրօ տրամադրեց, իրականացնելու համար հայկական գիւղի ծրագիրը, ցուցադրելու համար հայկական հարուստ մշակութային ժառանգութիւնը եւ ժողովրդային արուեստի ամանոյթները: Շաբաթավերջի խորհրդաժողովներ, ուտեստի տաղաարներ, վաճառողներ, արուեստի ցուցադրութիւններ եւ մշակութային ելոյթներ ամբողջացուցին հիմնական առաքելութիւնը, որ էր ժողովրդային գիտակցութեան մակարդակի բարձրացումը աշխարհաքաղաքական խնդիրներու մասին, զորս կը դիմագրաւեն Հայաստանն ու Արցախը:





2 Ուրուկուեյը Հայերենը, Որպես Երկրորդ լեզու Կընդունի
 Շտրիբի Ուրուկուեյի Ն.Բ.Ը.Մ.-ի ջանքերուն, 2019ին Ուրուկուեյի ազգային ժողովրդային կրթութեան տնօրէնութիւնը որոշեց հայերէն լեզուի դասաւանդումը, որպէս մէկ մասը Ուրուկուեյի բազմալեզու *Plurilingüe 2030 դարձնելու արշաւին, յուսալով որ բազմալեզուութիւնը տարածուի երկրի համայնքներուն մէջ*

3 Մելպուռնի Ն.Բ.Ը.Մ.-ի Ներդաշնակութեան Օրը
 Տարեկան բազմամշակութային միջոցառումը ցուցադրեց հայկական լաւագոյն ասանդոյնները, խոհանոցը եւ ձեռային արուեստը այցելուներուն:

4 Սոֆիայի Ն.Բ.Ը.Մ.-ը Կը Մասնակցի Զօրակցութեան Փառատօնին
 2018ին եւ 2019ին Սոֆիայի Ն.Բ.Ը.Մ.-ը մասնակցեցաւ զօրակցութեան փառատօնին Յունիս 24ին: Կազմակերպուած Գարիթաս Սոֆիայի, Multi Kulti Collective-ի եւ CVS Պոլկարիայ կողմէ, ձեռնարկը յառաջ քշեց զօրակցութեան գաղափարը տարբեր մշակոյթներու եւ ազգային հաւաքականութիւններու միջեւ: Սոֆիայի Ն.Բ.Ը.Մ.-ի տաղաւարը ցուցադրեց հայկական ազգային տարազներ: Այցելուները առիթ ունեցան տրվելու հայկական պարեր, նաեւ իրենց ցոյց տրուեցաւ. թէ ինչպէս կը գրուին իրենց անունները հայերէնով:

Ֆրանսայի ՆԲԸՄ-ը Կը Կազմակերպէ Երաժշտական

Շաբաթավերջ Մը Պրիսպէլի Մէջ:
 2018ին եւ 2019ին Ֆրանսայի/Եւրոպայի Ն.Բ.Ը.Մ.-ի կատարողական արուեստի բաժանմունքը կազմակերպեց երաժշտական շաբաթավերջ մը Պրիսպէլի մէջ, գործակցութեամբ Պոլոստան հիմնարկին- Villa Empain եւ Պելճիքայի հայ համայնքին, ցուցադրելու համար տարբեր ժանրի հայ երաժիշտները, երաժշտասեր լայն շրջանակի մը: 2018ին, գործակցաբար Պրիսպէլ քաղաքին, Ն.Բ.Ը.Մ.-ի լարային նուագախումբը ելոյթ ունեցաւ Քաղաքապետարանի շքեղ Կոթական դահլիճին մէջ ունկնդիրներու ներկայութեան, տօնելու համար Հարիւրամեակը Հայաստանի Առաջին Հանրապետութեան: Յարգամեծար ներկաներէն էին ներկայացուցիչներ Պելճիքայի պետական անձնատրուփիւններու եւ Եւրոպայի զանազան հաստատութիւններու: 2019ին Եւրոպայի Ն.Բ.Ը.Մ.-ը համագործակցեցաւ գեղարուեստի Պոզար Կեդրոնին հետ, որ Պրիսպէլի ամենաշատ այցելուները ունեցող մշակոյթի օճախն է, որպէսզի միասին տնօրինեն եւ ձեռնարկեն հայկական ֆիլմի ծրագիրը իր տարեկան «Կամուրջներ, Արեւելքը, Արեւմուտքի Ֆիլմի օրեր»-ուն մէջ, նուիրուած սինեմայի արեւելեան գործակիցներուն: 2019ին Պելճիքայի լրատուութիւնը միջոցառման մասին երկու անգամ հաղորդում կատարեց, կեդրոնանալով Հայաստանի եւ անոր ֆիլմի ծրագիրներուն մասին:

5 Շաբաթավերջ Պրիսպէլի մէջ, Ելոյթ Կունենայ տուտուկի վարպետ Լեոն Մինասեան:

2018-2019 Նախաձեռնություններ և Ուղղություններ

Հայրենաշինական Գործունեության Աշխուժացում



Ընտիր խաղողի բերքահաաք
Արցախի մէջ 2018

2018ին, Հայաստան եւ Արցախ շրջադարձային փուլ մը թեւակոխած էին, նախորդող տարիներու աղքատութեան եւ համատարած անգործութեան իրավիճակէն ելքեր փնտռելով՝ դէպի արդիւնաբերական զարգացման նոր փուլ՝ կարելոր մի քանի բնագաւառներու մէջ: Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութիւնը որոշում կայացուց անելի գործուն կերպով սատար կանգնիլ այս դրական փոփոխութիւններու ընթացքին: Համագործակցելով տնտեսագետներու եւ գործարարներու լայն շրջանակներու հետ, Հ.Բ.Ը.Մ. կրցաւ պարզել ասպարեզներու ռազմավարական կարիքները, որոնք մեծապէս օգուտ պիտի քաղէին որոշ ծրագիրներու իրագործումէն, որոնք իրենց կարգին պիտի սատարէին սերնդափոխութեան, յաւելեալ օտարերկրեայ հետաքրքրութիւն՝ անելի մրցունակ եւ խոստմնալից Հայաստանի հանդէպ, ըլլայ զբօսաշրջութեան, բարձր գիտարուեստներու, գիւղատնտեսութեան, թէ կառավարման, առեւտրի կամ գործարարութեան մէջ արդիւնաւետութեան բարձրացման բնագաւառներուն մէջ:

1 Խթանում Հայաստանի Բարձր Գիտարուեստի Արդիւնաբերութեան

2018ի Օգոստոսին, Հ.Բ.Ը.Մ. կարելոր ներդրում ունեցաւ հայաստանեան բարձր գիտարուեստներու ասպարեզի տպաւորիչ կարողութիւնները Սիլիքոնեան շովտի հսկաներուն ներկայացնելու առաքելութեան մէջ: Հ.Բ.Ը.Մ.-ի ներդրումը՝ նիւթական միջոցներ, արհեստավարժ հմտութիւններ եւ արդիւնաբերական կապեր՝ կազմակերպելու համար Nvidia-ի եւ Synopsis-ի ղեկավար անձնակազմի, ինչպէս նաեւ venture capitalist Թիմ Տրէյփըրի հետ հանդիպումներ ունենալու հնարաւորութիւնը, ճանապարհի հարթեց բարձր մակարդակի հայաստանեան պատուիրակութեան այցին համար, վարչապետի զխաւորութեամբ: Եւ բարձր գիտարուեստներու նախարարի մասնակցութեամբ: Այցելութեան աւարտը նշանաւորուեցաւ հարցազրոյցով մը, որ

կազմակերպուած էր Հ.Բ.Ը.Մ.-ի Սիլիքոնեան շովտի Մասնաճիւղին կողմէ, մասնակցութեամբ գիտարուեստի ոլորտի ղեկավար անձնաւորութեանց, ակադեմիական արհեստավարժներու եւ գիտնական մտաւորականներու, որոնք ընթացքին յայտարարուեցաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Virtual Bridge նախաձեռնութեան սկիզբը: Այս ծրագրով նախատեսուած է Հայաստանի գիտարուեստի համայնքի ձեռներեցներուն համար հնարաւորութիւններ ստեղծել եւ անոնց անհրաժեշտ գործիքներ տրամադրել անմիջականօրէն Սիլիքոնեան շովտին մէջ՝ գործընկերներ գտնելու, նիւթական միջոցներ գտնելու, ինչպէս նաեւ գրասենեակային եւ բնակելի տարածքներ ձեռք բերելու առումով՝ Սիլիքոնեան շովտին մէջ իրենց զգալի ներկայութիւնը ունենալու համար:



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA, DAVIT HAKOBYAN



1 WCIT 2019՝ Տեղեկատուական Գիտարուեստների Համաշխարհային Քոնկրետ Երեանի մէջ

Գիտարուեստի համակիրներ, ուսանողներ, ձեռներեցներ, գործարար համայնքի առաջնորդներ եւ նորարարներ առիթ ունեցան յայտնաբերելու Երեանը, եռօրեայ շքող Տեղեկատուական Գիտարուեստների Համաշխարհային Քոնկրետի ընթացքին, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 2019ին, Կարէն Տեմիրճեան Համալիրին մէջ: Հ.Բ.Ը.Մ. անփոխարինելի մասնակցութիւն ունեցաւ այս համաժողովի կազմակերպման համար անհրաժեշտ նիւթական միջոցներու հայթայթման ուղղութեամբ: Համաժողովի ընթացքին գործեց Հ.Բ.Ը.Մ.-ի տաղաւարը, ուր intern-ները եւ երիտասարդ արհեստավարժները առիթ ունեցան իրենց փորձառութիւնը ընդլայնելու եւ ներկայացնելու Հ.Բ.Ը.Մ.-ի թուային գործիքները: Քննարկումներուն կը մասնակցէին գիտարուեստի բնագաւառի հսկաներ, որոնք իրենց փորձառութիւնը եւ գիտելիքները ծառայեցուցին նոր մարտահրաւերներու պարզաբանման: Ընկերային ցանցեր, cyber անվտանգութիւն, էլ-առողջապահութիւն, արհեստական բանականութիւն, startups, եւ այլն: Տեսլական ունեցող անհատներու առիթ տրուեցաւ իրենց նորարարութիւնները



կայծակնային արագութեամբ ներկայացնելու եւ իրենց մտայղացումը իրականութիւն դարձնելու համար դրամաշնորհի արժանանալու: Քսանէ աւելի քննարկումներու ընթացքին մասնակիցները անդրադարձան բազմաթիւ հարցերու եւ նորարարական մտայղացումներու:

Հ.Բ.Ը.Մ.-ի եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Tech Research Group-ը

2019ին Հ.Բ.Ը.Մ. եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանը հիմնադրեցին հետազօտական խումբ մը, ուսումնասիրելու այն նորարարական բնագաւառները, ուր Հայաստանը կարողութիւն ունի գերիշխող դերակատարում ունենալու: Այս խումբի տուեալները ռազմավարութիւններու ստեղծման առաջին քայլը պիտի հանդիսանան, նկատի առնելով մեր կրթական, տնտեսական եւ գիտարուեստի տրամադրելի միջոցները:

ՀԲԸՄ Ֆրանսա. Հայկական Տաղաւար VivaTech Համագումարի Ընթացքին

Մայիս, 2019ին Հ.Բ.Ը.Մ. Ֆրանսայի մասնաճիւղը յանձն առաւ Փարիզի VivaTech Համագումարի ընթացքին ի ցոյց դնել հայկական բարձր գիտարուեստներու կարողունակութիւնները: Այս հաւաքի նիւթն էր համաշխարհային նորարարութիւնն ու start-up-ները: Հաւաքը որ կազմակերպուած էր HyeTech- Եւրոպայի եւ G2iA-ի՝ Հայ Միջ-արհեստավարժ Համաշխարհային Խումբի համագործակցութեամբ, համախմբեց 13,000 start-up-ներ, 124,000 այցելուներ, 3,300 ներդրողներ եւ 2500 լրագրողներ, ուր Հ.Բ.Ը.Մ.- Հայաստանի ջանքերով կազմակերպուած Ռգեշնչող Հայաստան տաղաւարին միջոցով ներկայացուած էին 15 օրինակելի հայկական start-up-ներ, ինչպէս նաեւ կայացած հաստատութիւններու ներկայացուցիչներ, ոորոնցմէ TUMO-ն եւ Արմատէ Engineering Laboratories-ը:

2 Հ.Բ.Ը.Մ. Հայաստանի Նախագահ Վազգէն Եագուպեան (ձախին) կը մասնակցի մամլոյ ասուլիսի, WCIT, 2019: **3** VivaTech, 2019 Համաժողովի Հ.Բ.Ը.Մ. Ներշնչող Հայաստան Տաղաւարը, **4** Հրուշակագործ եւ Կին Ձեռներեցներ ծրագրի ձեռներեց Շուշան Աւետիսեան **6** Գիմ Գարտաշեան եւ քոլորը Քորթնէյ կ'այցելեն Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի Կեդրոնը, ծանօթանալու համար Կին Ձեռներեցներու Ծրագրին եւ անոնց արտադրութիւններէն նմուշներու:



Հ.Բ.Ը.Մ.-ի Կին Ձեռներեցներ Ծրագիր


Համգում ունենալով, որ նիւթական անկախութիւնը Հայաստանի կանանց ներդրմի բանալին է, Հ.Բ.Ը.Մ.-ը 2018ին ձեռնամուխ եղաւ **Կին Ձեռներեցներ** նախատիպային ծրագրի իրականացման: Ծրագիրը հիմնուած է մեկամեայ օժանդակութեան վրայ, որ տրամադրելի է 25 կանանց, ընտրուած՝ Հայաստանի բոլոր շրջաններէն անոնց տրամադրելի դարձնելով հիմնադրելու կամ ընդլայնելու իրենց գործունէութիւնը իբրև ձեռներեցներ: Ընդգրկուած են ամենատարբեր բնագաւառներ. ուտելիք, նորաձեւութիւն, կրթութիւն, զբօսաշրջութիւն, նոյնիսկ՝ շինարարութիւն: Ծրագրի մեկամեայ ընթացքին ներգրաւուած կանայք ներառուեցին անվճար համալսարանական դասընթացքներու մէջ, մասնակից եղան փոքրածաւալ դրամաշնորհներու համար մղուող դժուարին մրցակցութեան, եւ օտարազգի մասնագետներու վերահսկողութեամբ ունեցան networking-ի եւ mentoring-ի առիթներ: Այս pilot-ի աննախադէպ յաջողութենէն ետք, եւ ընդառաջելով բերնեբերան տարածուած համբաւի բերումով ստեղծուած պահանջքին, 2019-ին եւս 75 կանայք ընդգրկուեցան ծրագրին մէջ: Ծրագիրը նաեւ ներառեց Արցախից կանայք:

5 Կամուրջ՝ CSO-ներու համար

Հ.Բ.Ը.Մ. Հայաստան Կամուրջ CSO-ներու համար վերտառութեամբ եռամեայ համաձայնագիր մը կնքեց, որ կը ֆինանսաւորուէր Եւրոպական Միութեան կողմէ, Սփիւռքի հետ կապերու սերտացման միջոցով Հայաստանի աճող քաղաքացիական հասարակութեան ամրապնդման նպատակով: Eurasian Partnership Foundation-ի հետ միասին, Հ.Բ.Ը.Մ.-ը 2017-2019 իրականացուց եռամեայ ծրագիր մը, որ նպաստեց Հայաստանի քաղաքացիական հասարակութեան զօրացման՝ սփիւռքեան տաղանդի եւ մասնագիտական գիտելիքի ներդրման միջոցով: Տարիներու ընթացքին, Հ.Բ.Ը.Մ. մեծապէս նպաստեց տարբեր ասպարէզներու համար նախատեսուած մասնայատուկ վարժողական ծրագիրներ, համալսարանական վկայեալ ուսուցում եւ փոքր՝ 20,000-30,000 եւրօ չափով դրամաշնորհներ: Բարի Կամքի Դեսպակի բաղկացուցիչը քաջալերեց Սփիւռքի հանրաձանաչ ազդեցիկ դէմքերու մասնակցութիւնը՝ իրենց կցուած CSO-ի հանրային ճանաչման մակարդակը բարձրացնելու գործին մէջ: Ծրագիրը յաջողութեամբ պսակուեցաւ:

«Լոյս» Հիմնադրամի Փակումէն Ետք Հ.Բ.Ը.Մ.ը Ընդլայնեց Կրթաթոշակներու Ծրագիրը

Օգոստոս, 2018ին Հ.Բ.Ը.Մ.ը որոշում ընդունեց իր գործունէութիւնը համակարգել Հայաստանի **«Խմ Բայլը»** Հիմնադրամի հետ, ի նպաստ յաւելեալ կրթաթոշակներու տրամադրման յօգուտ այն ուսանողներուն, որոնք ընդունուած էին աշխարհի լաւագոյն համալսարաններ: Այս յառաջադէմ ուսանողներէն շատեր ստիպուած պիտի ըլլային բարձրորակ ուսման տիրանալու իրենց երազանքները յետաձգել, նկատի ունենալով նախորդ իշխանութիւններու կողմէն հիմնադրուած **«Լոյս»** Հիմնադրամի գործունէութեան դադրեցումը թաւշայ յեղափոխութենէն ետք: Նորահաստատ **«Խմ Բայլը»** Հիմնադրամի առաջարկով, Հ.Բ.Ը.Մ.-ը տրամադրեց անհրաժեշտ միջոցները, ի խնդիր այդ երազանքներու կատարման:





Հայաստանի Հանրապետություն՝ իբրև Տեսարժան Երկիր

Հ.Բ.Ը.Մ.-ը կը խրախուսե՛ գրթաշրջութեան ասպարեզի՝ Հայաստանի ամենախոստմնալից բնագաւառներէն մէկուն զարգացման ուղղուած Նորարարական մտայնացումները եւ քայլերը: Օտար գրթաշրջիկներու փոքրածաւա, սակայն հետզհետէ աճող Ներհոսքով հանդերձ, *AGBU Magazine*-ի Մարտ, 2018-ի թիւը թարմ հայեացք նետեց այս ոլորտին, շեշտը դնելով Հայաստանի առաջարկած առաւելութիւններուն վրայ: Պատմական եւ ժողովրդական հարուստ ժառանգութիւն, ժամանակակից վայելքներ՝ խոհարարական ասանդութիւններու խաչասերում, տարբեր բարձրորակ երաժշտութիւն, լեռնագնացութեան եւ դահուկավազքի սքանչելի տեղեր, արեւմտեան ոճի հիւրընկալութիւն, եւ անվտանգ միջավայր եւ ջերմ ընդունելութիւն: Հայաշխարհի ընթերցողները այսպիսով փաստական տուեալներով զինուեցան Հայաստանը աշխարհով մէկ ճամփորդած օտարներուն իբրև այցելութեան արժանի վայր ներկայացնելու համար:

Ճանապարհորդութիւն Դեպի Զբոսայայտուած Երկիր

Յունիսի վերջին, Smithsonian Institution-ի կազմակերպած Folk-life Festival-ի Նախօրէին, Հ.Բ.Ը.Մ.-ը ճանապարհորդական գործիքներու հրապարակումը շարժեց անելի քան 150 ամերիկեան ճանապարհորդական գրասենեակներու եւ գործակալութիւններու հետաքրքրութիւնը: Այս ասպարեզի մասնագետներու եւ Հայաստանով խանդավառ անձերու հետաքրքրութիւնը խթանելը Հայաստանի գրթաշրջութիւնը խրախուսելու համար էական հանգամանք է: Նետեապէս, Հ.Բ.Ը.Մ.-ի այլընտրանքային

կրթութեան բաժնի անձնակազմը, Հայաստանի Զբոսաշրջութեան Պետական Կոմիտէի Նորանշանակ ղեկավար Հռիփսիմէ Գեորգեան, եւ Հայաստանի գրթաշրջային ասպարեզի ներկայացուցիչներ մասնակցեցան հանդիպումներու եւ ձեռնարկներու շարքի մը, ուր առեւտրային կազմակերպութիւններու տեղական լրատու միջոցներուն եւ ճամփորդական գործակալներու ներկայացուցիչներուն ներկայացուցեցան Հայաստանի մշակոյթի եւ գրթաշրջութեան կարելիութիւնները: Ըստ վիճակագրութեան տուեալներուն, այս ձեռնարկներուն յաջորդող շրջանին արձանագրուած է ներբեռնումներու կտրուկ աճ: Հանդիպումները տեղի ունեցան Պոստոնի, Նիւ Եորքի եւ հոսկ՝ Ուաշինկթընի մէջ, ուր մասնակիցները մասնակից եղան Folklife Festival-ին, որու կազմակերպիչն էր **Իմ Հայաստան**-ը՝ մշակութային գրթաշրջութեան հաստատութիւն մը, որ կը ֆինանսատրուի US-AID-ի կողմէ, եւ իրականացուած՝ Smithsonian Institute-ի ջանքերով, ՀԲԸՄ-ի համագործակցութեամբ:

Հայաստանի Գինեգործութեան Հանրապետութիւն

AGBU Magazine-ի Ապրիլ, 2019-ի թիւը բարձրորակ գինեգործութեան աշխարհին ծանուցեց, որ Նոր մրցակից մը ի յայտ եկած է եւ իր ուրոյն տեղը կը գրաւէ գինեգործական քարտէսներու վրայ: Հայկական գինեգործութեան տարբեր երեսներուն հանգամանալից ու բազմակողմանի անդրադարձով հիմնաւորապէս ներկայացուցեցան հայկական գինիներու որակական յատկանիշները եւ անոնց յասկնութիւնները: Այս ակնարկը առիթ դարձաւ գինիի փառատօներ կազմակերպելու, ինչպէս նաեւ նպաստեց հայկական գինիի դեսպաններ եւ ջատագովներ պատրաստելուն:

1 Նախագահ Պերճ Սեդրակեան եւ Արցախի ատենի Նախագահ Բակօ Սահակեան Ստեփանակերտի մէջ (2019)

Տնտեսական Աճի Ռազմավարութիւն Արցախի Համար

Ըմբռնելով, որ կայուն զարգացող տնտեսութիւնը անհրաժեշտութիւն է Արցախի գոյութեան եւ միջազգային ճանաչման համար, չ.բ.Ը.Մ. 2018ին յատուկ հիմնադրամ մը ստեղծեց՝ «Արցախ Ֆոնտը», սատարելու համար այնտեղ գործող ընկերային-տնտեսական ծրագիրներուն եւ քաջալերելու նմանօրինակ նոր ծրագիրները: Թռիչքային աճի ռազմավարութիւնը կառուցուած է հանրապետութեան գոյութիւն ունեցող կարողութիւններուն վրայ՝ գիտատնտեսութիւն, կրթութիւն, մշակոյթ եւ կառավարում, զբօսաշրջութեան եւ նոյնիսկ պաշտպանութեան բնագաւառներուն մէջ երիտասարդ եւ աճող արհեստավարժներու դասակարգ մը: Յիշատակելի են նաեւ քսանամեայ չ.բ.Ը.Մ.-ի օժանդակութիւնը վայելող Արցախի Սենեկային Նուազախումբը, մարդասիրական եւ բժշկական օգնութիւնը եւ 2016ի Արցախեան Քառօրեայ պատերազմի զոհերուն եւ անոնց ընտանիքներուն տրամադրուած դրամական օգնութիւնը. չ.բ.Ը.Մ. **Թումո X Պատանիներու Համար** Ծրագրի, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Extension School for adults-ի եւ սպաներու եւ զինուորներու թուային ուսուցման ծրագիրները որոնք մտան Արցախ Ֆոնտի հովանիին ներքոյ, կազմելով կապակցուած կարելիութիւններու ամուր կրօւան մը, հանրապետութեան զարգացումին ի նպաստ:



«Յուսոյ Դաշտեր»

2018ին, չ.բ.Ը.Մ.-ը սկիզբ դրաւ գիտատնտեսական զարգացումի նոր ծրագրի մը ապրուստի միջոցներ ապահովելու Արցախի մէջ բնակչութիւն հաստատած սուրիահայերու: չ.բ.Ը.Մ.-ը անոնց կը տրամադրէր սերմնացու գիտատնտեսական գործիքներ հաւաքաբար օգտագործելու զանոնք: Ծրագրի հիմնական բաղադրիչն էր սերմնացուներու գնումը եւ պահեստաւորումը, եւ բերքի պահպանութիւնը ապահովող վարկերու տրամադրումը: 2019ին, ծրագիրը ընդլայնուեցաւ ընդգրկելու համար նաեւ շրջանի տեղացի բնակչութիւնը, Արցախի նպաստաւոր կլիման եւ բերրի հողը լաւագոյնս ծառայեցնելով երկրի գիտատնտեսութեան զարգացման:





2 Ն.Բ.Ը.Մ. LEAP Ուսուցումի Ծրագիր

2019ին սկիզբ առած այս ծրագրի նպատակն է զանազան կրթական ենթահող եւ տարբեր մակարդակի հմտութիւններ ունեցող մարդոց օգնելու, որ ստեղծեն կայուն եկամտաբերութիւն ունեցող սեփական զբաղմունք, կամ զանոնք զինելու համապատասխան հմտութիւններով, որոնք կը բարելաւեն գործառու դառնալու իրենց կարելիութիւնները: Ծրագիրը նաեւ կը միտի հանրային ծառայողներուն օժանդակելու, որ մատուցեն առաւել որակեալ ծառայութիւններ, բարձրացնելով վարչարարութեան մակարդակը, ինչպէս նաեւ աւելցնելու զբօսաշրջութեան եւ հիւրընկալութեան ասպարէզի գործարարներու կարողունակութիւնը: Այլ երիտասարդ թէ տարեց անձեր կրնային մասնակցիլ միջազգային գործարարութեան համար նախապայման եղող անգլերէն լեզուի դասընթացներու, նպաստելու համար դէպի Արցախ օտարազգի ներդրումներ հայթայթելու եւ Արցախի տնտեսութիւնը զարգացնելու գործին:

Երկխօսութիւն Եւ Ժողովրդավարութիւն

2018ի թաւշեայ յեղափոխութենէն անմիջապէս ետք, Ն.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական գրասենեակը նպաստեց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու վերազնահատման ու վերաթմեւորման օրակարգին: Հայաստանի Նորընտիր Նախագահ Արմէն Սարգսեան բաց երկխօսութիւններ ունեցաւ Նիւ Եորքի եւ Գալիֆորնիոյ մէջ, իսկ ՄԱԿ-ի մէջ Հայաստանի դեսպանը՝ Զօհրապ Մնացականեան (հետագային՝ Հայաստանի արտաքին գործերու Նախարար), այցելեց Նիւ Եորքի Կեդրոնական Գրասենեակ, գաղութը տեղեակ պահելու թաւշեայ յեղափոխութեան ազդեցութեան եւ հետեանքներուն մասին՝ Նոր Հայաստանի մէջ: Սեպտեմբեր, 2019ին, Սփիւռքի Յանձնակատար Զարեհ Սիւննեան, Նախաճաշ-հանդիպում մը ունեցաւ ամերիկահայութեան նեկայացուցիչներու հետ, որ կազմակերպուած էր Մեծն Նիւ Եորքի Երիտասարդ Արհեստավարներուն կողմէ, նպատակ ունենալով յստակեցնել ժողովրդավարութիւն կառուցելու միասնական տեսլականը եւ քննարկելու երկուստեք օգտակար միջոցները՝ զարկ տալու Հայաստանի ընկերային-տնտեսական զարգացման:

Ձիթենիի Այգիներ Ծրագիր

«Յուսոյ Դաշտեր» Ծրագրի անտարակուսելի յաջողութենէն ետք, 2019ին Ն.Բ.Ը.Մ.-ը ձեռնարկեց Ձիթենիներու ծրագրի իրականացումը, երկարաժամկետ նպատակ հետապնդելով Արցախը ձեթի եւ ձիթապտուղի արտադրութեան կեդրոն դարձնելը, թէ՛ ներքին սպառումի եւ թէ՛արտածումի իմաստով: Սուրիահայ գաղթականներէն ոմանք եւս յանդուգն գտնուեցան այս խոստմնալից մարտահրաւերն ընդունելու: Ն.Բ.Ը.Մ.-ը տրամադրեց որակեալ տունկեր, լիովին ըմբռնելով, որ այս ծրագրի շօշափելի արդիւնքները երեւան պիտի գան միայն տարիներ ետք:

1 Կին Գործարարներու Ծրագիր Արցախ

2019-ին, Կին Գործարարներու ծրագիրը ընդլայնուեցաւ ներառելու համար նաեւ Արցախի կանայք: Առաջին հանգրուանին ծրագրին մասնակցեցան 25 Արցախցի կանայք:



ՄԻԱԿՈՐՈՂ ԿԷՏԵՐ



Նիւ Ինկլընտի Շրջանակի 110-րդ յոբելեանի տոնակատարութիւն, MIT-ի Sandberg Conference Centre-ի մէջ (2018):



1

2

2018-2019 տարիները լեցուն էին տարաբնույթ եւ աշխոյժ ձեռնարկներով, որոնք նախաձեռնուեցան Հ.Բ.Ը.Մ.-ի համաշխարհային ցանցի չորս ծագերուն. միջազգային հաւաքներէն, ինչպէս Հ.Բ.Ը.Մ.-ի Ընդհանուր Ժողովը՝ Փարիզի մէջ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի FOCUS-ի հաւաքը՝ Սան Փաուլոյի մէջ, մինչեւ տեղական ձեռնարկներ՝ նշելու համար պատմական դէպքեր կամ հերոսական կերպարներու յիշատակը: Տեղի ունեցան նաեւ Հ.Բ.Ը.Մ.-ի դպրոցներու եւ Շրջաններու յոբելեաններ եւ այլ ձեռնարկներ, որոնք ի ցոյց դրին Հ.Բ.Ը.Մ.-ի բոլոր մակարդակներու ղեկավարութեան ստեղծագործ, եռանդուն եւ գործուն աշխատանքը:

Հ.Բ.Ը.Մ.-ի Երկամեայ Նաւաքներ

Հ.Բ.Ը.Մ.-ի 90-րդ Ընդհանուր Ժողով, Փարիզ

Փետրուար 2019ին, Հ.Բ.Ը.Մ.-ի 90րդ Ընդհանուր Ժողովը մեր անդամներուն եւ բարեկամներուն համար պատեհութիւն եղաւ խորհրդածելու 2016-2017 թուականներու ընթացքին Հ.Բ.Ը.Մ.-ի ձեռքբերումներուն մասին: Ժողովի պաշտօնական մասը տեղի ունեցաւ Les Jardins de Saint Dominique-ի մէջ, եռօրեայ ծրագիրով, որու մէջ ընդգրկուած էին համաշխարհային ղեկավարութեան ժողովը, Հ.Բ.Ը.Մ.-ի Յանձնաժողովներու եւ Մասնաճիւղերու հանդիպումար եւ աշխատաժողովներ, Երիտասարդ Արիեստավարժներու եւ յատուկ յանձնախումբերու ներկայացուցիչներու հանդիպումները, մեկնարկային շքեղ ձեռնարկ մը՝ Էյֆելեան աշտարակին գագաթին, մէկօրեայ բաց քննարկում մը՝ Station F-ի մէջ, ողբացեալ Շարլ Ազնաւուրի յիշատակին նուիրուած համերգ մը եւ Gala Extravaganza մը՝ Pavillon Ledoyen-ի մէջ, մեծարելու համար Սարգիս եւ Սեդա Տեմիրճեանները եւ Վաչէ եւ Թամար Մանուկեանները:

Ընդհանուր Ժողով, 2019 ¹ Մասնակիցներ Փարիզի Station F-ի մէջ: ² Ելոյթ Վալայի ընթացքին: ³ Հ.Բ.Ը.Մ.-ի Երիտասարդ Արիեստավարժներու աշխատաժողով առաջնորդութեան հարցերու մասին: ⁴ Համագումարի հիմնական զեկուցողը՝ Ռոպերթ Վասոյեան: ⁵ Միտքերու փոխանակում նոր ծրագիրներու՝ պատգամատրներու մասնակցութեամբ: ⁶ Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Պերճ Սեդրակեան կը նախագահէ 90րդ Ընդհանուր Ժողովին: ⁷ Մեծարելու Սարգիս եւ Սեդա Տեմիրճեանները եւ Վաչէ եւ Թամար Մանուկեաններ: ⁸ Վալայ afterparty.



Հ.Բ.Ը.Մ. FOCUS Սան Փաուլոյի մէջ

Հ.Բ.Ը.Մ. Կիզակետ-ի (Focus) շաբաթավերջի երկամեայ 10-րդ համագումարը տեղի ունեցաւ Հարաւային Ամերիկայի մէջ 2019-ին: Պրագիլ հիւրընկալեց 26 երկիրներէ ժամանած Երիտասարդ Արհեստավարժները եւ կազմակերպութեան ղեկավարութիւնը, որոնք խորհրդակցական եւ ծրագրային քննարկումներ ունեցան յառաջիկայ նախաձեռնութիւններու եւ համագործակցութեանց կապակցութեամբ: Երկար քննարկումներէ ետք անոնք որոշեցին առաջին անգամ ըլլալով յատկացնել Նուպար Նազարեան Երիտասարդ Արհեստավարժներու Նորարարական հիմնդրամի դրամաշնորհը: Շաբաթավերջի հաւաքոյթին եւ անոր նախորդող դրամահաւաքէն գոյացած \$120,000-ի գումարը յատկացուցաւ Հայաստանի Կիներու Ձեռներեցութեան Ծրագրին:

1 Բանախօսներ ձայնէն աջ՝ Միքայէլ Ճանեան (Հայաստան, Պրագիլ), Նաթաշա Տեր-Աւետիսեան (Կիպրոս), Սարգիս Սեմերճեան (Պրագիլ) եւ Սոլամժ Մերտիկեան (Արժանթին, ԱՄՆ):

2 Focus-ի արուեստի երեկոյ նուիրուած հայկական եւ լատինամերիկեան երաժշտութեան: 3 Կարուցել Յանուն Ապագայի ծրագրի մասնակիցներու աշխատածողով, ծրագրային նոր մտայղացումներ կը ներկայացնեն: 4 4. Պրագիլական Samba School Rosas de Ouro-ի պարողները հայ մշակոյթը կը պանծացնեն: 2019-ի Carnival-ի կատարումը երեկոյթի ընթացքին: 5 Երիտասարդ արհեստավարժներու մէկօրեայ հաւաք Սան Փաուլոյի Pullman Hotel-ին մէջ:





1



2



3

Պատմական Յիշատակումներ

1 Արցախեան Ազատագրական Շարժումը 30 տարեկան

2018ին Ն.Բ.Ը.Մ.-ի ընտանիքը ի մի եկաւ յիշատակելու Ստեփանակերտի եւ Երեւանի մէջ կայացած զանգուածային ցոյցերու 30-ամեակը, որոնք ծնունդ տուին արցախեան ազատագրական շարժումին: Ն.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական գրասենեակը հիւրընկալեց հայաստանաբնակ Նկարիչ Դաւիթ Յակոբեանը եւ իր ցուցահանդէսը, որ կը ներկայացնէր ութ տարիներու ընթացքին Նկարած դրոշակներ հայ զինուորներու անձնական եւ ծառայական կեանքէն: Ն.Բ.Ը.Մ.-ի Պրիւսէլի եւ Նայաստանի Եւրոպական Բարեկամները (EuFoA) յիշատակի ձեռնարկին որպէս շարունակութիւն համագումար մը կազմակերպեցին Եւրոպական Խորհրդարանին մէջ, ուր քննարկուեցաւ աշխարհի կապը Արցախի հետ: Ն.Բ.Ը.Մ. Միլանի մասնաճիւղը եւ Իտալիայի Նայերու Միութիւնը քննարկում մը կազմակերպեցին Նայ Տան մէջ նուիրուած Սումկայիթի զոհերու յիշատակին:

2 100-Ամեակ Նայաստանի Առաջին Նանրապետութեան

2018ին Նշուեցաւ Սարդարապատի ճակատամարտի շարհրամեակը, որ կարելի դարձուց Նայաստանի Առաջին Նանրապետութեան հիմնադրումը, ինչպէս նաեւ Երրորդ Նանրապետութեան շնորհիւ: Ն.Բ.Ը.Մ. այս յիշելի ամեակը Նշեց երեք երկիրներու մէջ. Երաժշտական շաբաթավերջ մը Պրիւսէլի մէջ, կազմակերպուած Ֆրանսայի Ն.Բ.Ը.Մ.-ի Կատարողական Արուեստներու Բաժանմունքին կողմէ, համագործակցութեամբ Պոդոստանի Նիմադարամի, Պրիւսէլի քաղաքային իշխանութեանց, եւ Պելճիքայի հայ համայնքին: Նայաստանի մէջ այս դարադարձը Նշուեցաւ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի դասախօսութիւններու շարքով մը, ծրագրուած Նայաստանի Ամերիկեան Նամակարանի գործակցութեամբ: Իսկ Լոս Անճելոսի մէջ ալ շարհրամեակը Նշուեցաւ վաերագրական ֆիլմի ցուցադրութեամբ՝ Ն.Բ.Ը.Մ.-ի Ասպետներու եւ ԱՄՆ Արեւմտեան Թեմի հետ համատեղ:

Սումկայիթի 30-Ամեակ

Ապրիլ 24ին, Ն.Բ.Ը.Մ. Սոֆիայի Նայէր կիրակնօրեայ դպրոցը եւ Փլովտիի Մալվինա Մանուկեան Թատրոնը Նշեցին Սումկայիթի ջարդերուն 30-ամեակը: Ներկաները մոմեր վառեցին եւ ծաղկեպսակներ գետեղեցին քաղաքի հայկական խաչքարին առջեւ, որ կը գտնուի Սոֆիայի Երեւան պարտեզին մօտ:

3 Կոմիտասի 150-ամեակ

Կիրճիւն Նամոյթը Ելոյթ ունեցաւ Նիւ Եորքի հանրայայտ Symphony Space-ի Peter Jay Sharp թատրոնին մէջ, կազմակերպութեամբ Ն.Բ.Ը.Մ. Կատարողական Արուեստներու Բաժանմունքին: Գանաստայի մէջ յուշ երեկոյ մը կազմակերպուեցաւ հանրայայտ Telus Centre for Performance and Learning-ի մէջ, Amici Chamber Ensemble եւ Canadian Children's Opera-ի մասնակցութեամբ: Ն.Բ.Ը.Մ. Սոֆիայի մասնաճիւղը Կոմիտասեան ամեակը Նշեց, Նայաստանի Նանրապետութեան դեսպանատան հետ համատեղ կազմակերպուած համերգով մը Նայ համայնքային Կեդրոնին մէջ: Ն.Բ.Ը.Մ. Նայաստանը Երեւանի Ն.Բ.Ը.Մ.-ի ցուցասրահին մէջ կազմակերպեց արուեստագետ Անի Յովակի գործերու ցուցադրութիւն մը, Կոմիտաս խորագրով, Նովեր երգչախումբի կատարմամբ համերգի մը ուղեկցութեամբ: Նարայային Ամերիկայի հանրութիւնը Կոմիտասի վայելքը ապրեցաւ Ն.Բ.Ը.Մ. Պունտու-Այրեսի կազմակերպած համերգին միջոցաւ, համագործակցութեամբ Արժանթինի մէջ Նայաստանի դեսպանատան եւ Երեւանի Կոմիտասի Անուան Երաժշտանոցին: Kirchner Cultural-ի մէջ հարիւրաւոր հանդիսատեսներու ներկայութեան, Ելոյթ ունեցաւ Ն.Բ.Ը.Մ.-ի Ուրուկուէյի Կռունկ Երգչախումբը:

CALUM MACHADO, JESSE SOURSOURIAN

Յոբելեաններ

1 Համագումար՝ Հայ Կին-ի 25-ամեակին առիթով

Լոս Անճելոս, 2019. Հայ Կին-ի ամենամեայ 13րդ համագումարը նուիրուած էր երիտասարդութեան վրայ թուային դարաշրջանի ունեցած ազդեցութեան: Այս երեսոյթը նկատելի է թէ՛ դպրոցներու, թէ՛ տուններու մէջ: Համագումարը վարեց Սոնա Եագուպեան, որ նաեւ հակիրճ ակնարկ մը նետեց Հ.Բ.Ը.Մ.-ի Հայ Կին-ի պատմութեան եւ անոր ձեռքբերումներուն վրայ անցնող քսանհինգ տարիներուն ընթացքին: Ձեռնարկը տեղի ունեցաւ Վայչէ եւ Թամար Մանուկեան կեդրոնի նորարաց թատերասրահին մէջ:

2 Հ.Բ.Ը.Մ. Անդրանիկ Պարախումբի Յիսնամեակը

Նիւ Եորք, 2019. Սեպտեմբերի 29-ին Հ.Բ.Ը.Մ. Անդրանիկ Պարախումբը յրբեմնական ելոյթով մը նշեց իր յիսնամեակը French Institute-ի Florence Gould թատերասրահին մէջ: Ելոյթը խորագրուած էր «Արեւածագ» եւ նուիրուած էր Հայաստանի ժողովուրդի նոր սերունդին, եւ բաղկացած էր մօտ 20 նոր ստեղծագործութիւններէ:

ՀԱՅՔ Գերմանահայկական Ուսանողական Ակումբի Տասնամեակ

Ռոշոթը, 2018. ՀԱՅՔ Գերմանահայկական Ուսանողական Ակումբը յատուկ ձեռնարկով մը նշեց Հ.Բ.Ը.Մ.-ի հետ իր համագործակցութեան տասնամեայ յոբելեանը, Գերման եւ Հայ ժողովուրդներու միջեւ բարեկամական կապերը ամրապնդելու ուղղութեամբ յատուկ ծրագիրով:

Հ.Բ.Ը.Մ. Հարաւային Ամերիկա. Յոբելեաններ

Հարաւային Ամերիկայի Հ.Բ.Ը.Մ.-ի մասնաճիւղերը շարք մը պատմական իրադարձութիւններ նշեցին 2018 եւ 2019 թուականներու ընթացքին. նախ՝ Գորտոպայի Հ.Բ.Ը.Մ.-ի Հարիւրամեակը, ապա Հ.Բ.Ը.Մ.-ի Պրագիլի 55-Ամեակը. Հ.Բ.Ը.Մ. Պուէնոս Այրեսի հայկական խոհարարական շաբաթին եւ Հ.Բ.Ը.Մ. Ուրուկուէյի Կռունկ երգչախումբին 25-ամեակները, իրենց համայնքները հարստացնելով հայ մշակոյթով:

